Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի
11- 12 -րդ դասարան Ժամանակը՝ 180 րոպե

Քրիստոսի մկրտության տոնն էր:

Ի ուրախություն հայերի Վասիլ կայսեր ***հրամանով*** ջրօրհնեքը կատարելու էր կաթողիկոս Պետրոս Արշարունին որից հետո հունաց պատրիարքը: Ահա քրքումնաթույր **թիկնօթոցն** ուսերին առաջ եկավ հայրապետը ***ակնեղենով*** ընդելուզված սկիհը ձեռքին և սրբազան մյուռոնը թափվեց գետում ապա սուրբ խաչն ***երիցս*** ընկղմեց օրհնված ջրի մեջ:

Ով հրաշք գետի արևից շողարձակող ալիքներին յոթներանգ ցնցուղներ հայտնվեցին ու ներկաներին թվաց ջուրն սկսեց հետ հոսել:

Գետը հետ դարձրեց գոչեց ամբոխը աչքերն անքթիթ հառնելով ալիքներին:

Արտասովորը թեկուզև մտացածին, զորավոր է: Եվ ***այստեղ*** Ալրագետի ափին մարդը դարձավ ***առասպելաստեղծ*** համոզելով ինքնիրեն և այլոց իբր կաթողիկոսն այնքան բարեպաշտ է որ կարողացավ փոխելու գետի ընթացքը ասում են այդ դիպվածից հետո կաթողիկոսին հորջորջեցին «Գետադարձ» :

Իրականում ոչ մի հրաշք էլ չէր եղել մյուռոնը այն պատրաստվում է անուշահոտ յուղերից ու ծաղիկներից սառը ջրում վերածվել էր գունագեղ կաթիլների որ ալիքների հոսքին հակընթաց ***քամուց*** ստեղծել էր պատրանք թե գետը փոխեց հունը:

Հայերի համար սակայն կատարվածը առ ոչինչ էր հանձինս կաթողիկոսի նրանց առաջ կանգնած էր միայն ***արգահատանքի*** արժանի ողորմելի մի ազգուրաց օրերս նա յուր **ձեռամբ** ստորագրել էր Անին հույներին ***հանձնելու*** վավերագիրը և հիմա հպարտ կերպով նայում էր ամբոխին նույնիսկ չփորձելով հերքել իրեն վերագրվող թվացյալ հրաշքը:

Հետագայում ոչ զոջումը ոչ ապաշխարողի քուրձը ի զորու չեղան փրկել հայրենադավ կաթողիկոսին:

Կա անկապտելի ճշմարտություն ժողովուրդը երբեք չի ներում դավաճաններին:

1. Կետադրի՛ր համր բնագիրը: (5 միավոր)
2. Բնագրից դո՛ւրս գրիր սխալ գործածված բառերն ու բառաձևերը՝ դիմացը նշելով ճիշտ տարբերակը: (5 միավոր)
3. Բնագրից դու՛րս գրիր տրված բառերի հոմանիշները՝ ***տեսիլք, անհեթեթ, երևակայական, թշվառ, ակնապիշ, անգամ, դեղնավուն, անկողոպտելի, խորշանք, ագուցել:*** (5 միավոր)
4. Որոշի՛ր բնագրում ընդգծված բառերի շարահյուսական պաշտոնները: (5 միավոր)
5. Տրված բառերի բոլոր արմատներով կազմի՛ր մեկական բարդ, ածանցավոր կամ բարդածանցավոր բառ. ***անկապտելի, անվերծանելի, արգահատանք, ընդվզում, ներհակ, զառամյալ, մեկնարկ, առնչվել:*** (5 միավոր)
6. Կազմի՛ր հինգ նախադասություն անորոշ դերբայի տարաբնույթ կիրառություններով (ստորոգելի, որոշիչ, հանգման խնդիր, անջատման խնդիր, պատճառի պարագա)՝ նշելով շարահյուսական պաշտոնը: (5 միավոր)
7. Տեքստից դո՛ւրս գրիր գրաբարյան բառաձևերը: (5 միավոր)
8. Մեկնաբանի՛ր ***Ջրափոսի մեջ մեկը տեսնում է ջրափոսը, մյուսը՝ երկնքի աստղերը, առղալու համար ծնվածը չի կարող թռչել, Հռոմը մի օրում չի կառուցվել, Գողգոթայի ճանապարհ , կրավորական կեցվածք ընդունել*** թևավոր խոսքերը:
9. Գրի՛ր շարադրություն «Քո պատգամը հղի՛ր աշխարհին» վերնագրով (երկու էջի սահմաններում): (10 միավոր)